

ցաւ Անգղիոյ թագաւորական իշխա-
նուհւոյն վիկտորիայի հետ :

Երբ իր հօրեղբայրը փրեղերիկոս Գու-
լիէլմոս Գ. բացարձակ և յետադէմ կա-
ռավարութեամբ կը միապետէր, ժողո-
վուրդը բոլոր իւր սէրը և ակնկալու-
թիւնը փրեղերիկոս Գուլիէլմոս պատա-
նւոյն վրայ դարձուցած էր. որուն ազա-
տական ոգին ծանօթ էր ամենուն, և
սահմանադրական կողմնակցութեան ե-
րևելի անձանց հետ իւր մտերմական
վերաբերութիւնները կը պահէր: Ինչ-
պէս նաև հիմա իւր հօրը թագաւորու-
թեան ժամանակն ալ Պիսմարը կոմսին
խիստ և տիրապետական կառավարու-
թիւնը և առ խորհրդարանն բռնած
կերպը շատ անգամ պախարակեր է:

Երբ Բրուսիա, Աւստրիա և Գերմա-
նական դաշնակցութիւնը մէկտեղ միա-
ցած Տանիմարգայի դէմ պատերազմի
ելան՝ ինքը մասն չունեցաւ, և այս բանս
իրեն աւելի պատիւ եղաւ. վասն զի իւր
ազնուական և քաջայաղթ ճակատուն
չէին վայլեր այն պատերազմով ստա-
ցուած յաղթական դափնիները:

Բայց 1866 տարւոյն Աւստրիոյ դէմ
տրուած պատերազմին յաջողակ և կըտ-
րիճ զօրավարի մեծ Վամբաւ ստացաւ:
Ինքն Օտէրի բանակին հրամանատար ե-
ղաւ և Աւստրիոյ սահմանները կոխելով
շատ մը շքեղ դործերով մաքրեց ճամ-
բան թշնամոյն զօրքերէն: Աւելի նշա-
նաւոր Վանդիսացաւ ի նշառտ և ի
Շքալից՝ Շդայնմէց հինաւուրց զօրավա-
րին ներքև պատերազմելով: Դրաւդե-
նաւի մէջ Բրուսիացիք ետ քաշուելու
պարտաւորուելով, այս անյաջողութիւ-
նը ֆէրնիկինհօֆի յաղթութեամբ դար-
մանեցաւ, որ Սատովայի կռուոյն նախ-
ընթաց ճամբայ բացաւ, յորում թա-
գաժառանգ իշխանը յաղթութեան որո-
շիչ ժամանակին իրեն բանակովը թըշ-
նամոյն վրայ ընկնալով, զինուց վտան-
գեալ բախտը ի նպաստ Բրուսիացւոց
շրջեց. և կատարեց այն երևելի յաղ-
թութիւնը, որ Աւստրիացւոց պարտու-
թեանը պատճառ եղաւ:

Անցեալ տարուան պատերազմին մէջ

ալ Գաղղիացւոց դէմ շատ մեծ արդիւնք
ունեցաւ թագաժառանգ իշխանը և զը-
խաւորապէս վայսէմաւորիկի և վէօրթի
կռուոց մէջ երևելի հանդիսացաւ:

Փրեղերիկ. Գուլիէլմոս իշխանին ար-
ժանեացն մեծ յարգ կը յաւելուն աշ-
խարհիս առջև իւր չափաւորութիւնը,
պարզութիւնը, հեզութիւնը և բարուց
քաղցրութիւնը: Վերջի պատերազմին
ժամանակ մինչդեռ արեան ճապաղիք
և յաղթութեանց շունչն իւր հայրե-
նակցաց և զինակցաց շատին սրտին մէջ
մարդասիրութեան և արդարութեան
վսեմ դժացմունքը ցամքեցունէր և զազա-
նային սկզբունք փոխանակեցին, մինչև
անգամ յաղթական զօրութեան վրայ
հիմնել իրաւունք և օրէնք, թագաժա-
ռանգ իշխանն այսպիսի անվայել զինո-
վութեան մը մասնակից չեղաւ, այլ ընդ
հակառակն իբրև քրիստոնեայ և իբրև
ազնուասիրտ անձն պախարակեց զա-
նոնք և ըստ կարեւորն ջանաց դէմն առ-
նուլ:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

(Տես էրես 77:)

Մէկ մ'որ ծանօթ եղանք թէ մեր
մէջը միշտ վառուած կրակ մը կայ, ալ
դժուարին չէ ըմբռնել թէ ինչպէս կա-
րելի է որ մեր մարմինը միշտ ջերմ պա-
հուի: Յայտնի բան է որ կրակը, ձմեռ
ատեն աւելի սաստիկ ըլլալու է քան թէ
ամառը, և այս բանիս համար ազգա-
րարութեան մը պէտք չկայ. և բնու-
թիւն ինքնին ատոր հոգը կը տանի: Այս-
պէս աւելի երբ ցուրտ կ'ընէ՝ ուտելու
ախորժակնիս կը բացուի, քան թէ երբ
տաք կ'ընէ: Սակայն ձմեռուընէ ամառ

ի մեզ այդ տարբերութիւնը շատ զգալի չէ, վասն զի մարմինն իս ստացած ունակութիւնները կը պահէ, և առանց իսկ մի և նոյն պիտոյքը ունենալու յօժարութեամբ ամենօրեայ կերակրոյ չափը կը պահանջէ: Որպէս զի մէկը աղէկ հասկընայ թէ ինչ վերաբերութիւն կայ աննդեան ներքին պիտոյից, այսինքն կիւզելի նիւթին, և արտաքին բարեխառնութեանը մէջ, պէտք է Հնդկը դիտել, որ արեւադարձի և հասարակածին մէջ տեղուանք բնակելով, բրինձի ոչ ինչ քանակով մը կ'ապրի, մինչդեռ Եսքիմացին՝ որ բևեռային շրջանակէն անդին գտնուելով, անանկ երկրի մը մէջ ուր եւրոպացի ճանապարհորդաց վկայութեւն համեմատ անդիկը կը սառի, որպէս զի իր 37 աստիճանի ջերմութիւնը կարենայ պահել երբեմն 10^{էն} մինչև 15^{լիտը} պալէնայի իւղ կը կլլէ: Այդ իւղը շատ աւելի գէշ է քան զձողաձուկի (սլաքալա) լերդի իւղը, եթէ երբեք խմեր ես, բայց անոր փոխանակ ալ շատ աղէկ կիզելի գոյացութիւն մըն է. ուստի և այն խեղճ մարդիկ շատ նուրբ չեն նայիր համին. որչափ ալ ծանր նստի իրենց, հարկ է զկրակը վառ բռնել, և աղէկ վառ: Բայց ինչ հարկ է այսչափ հեռուները պտըտիլ. բարեկամներէս մէկը, անցած շաբթուն, ինծի կը պատմէր թէ Բորդոգալ, այն նարինջներուն հայրենիքը, շատ անգամ պարոնայք ու տիկնայք, այսինքն այն ոմանք որ ախորժակին զրգուլթեանը համեմատ ուտելու կարող են, հինգ վայրկենի մէջ ոտքի վրայ կտոր մը հացով և ինչ և իցէ ձեռք եկած բանով կը ճաշեն: Գնա այդ կերակուրի կանոնը նի հար ու խարտեաշ անգղիացի օրիորդներէն մէկուն առաջարկէ, որ ինչպէս կ'ըսուի, պարախաղուց մէջ, իբր զովացուցիչ բան՝ խորովածոյ միս կ'ուտեն: Անշուշտ քեզի պատասխան կուտայ թէ իր հայրենիքը՝ ճաշելու համար նստիլ հարկ է, վասն զի այդ գործոյ ժամանակը շատ երկայն կը քշէ, և պնակներուն մէջ դրուած միս կտորները շատ մեծ են: Կարելի է նաև ըսէ քեզի որ այդպէս ընելով գէշ բան մը չեն ըներ, վասն զի իր կըղ-

զոյն ցուրտ մառախուղները շատ աւելի վառ կրակ մը կը պահանջեն քան զԲորդոգալի պայծառ արևը, և եթէ մէկը կ'ուզէ իր 37 աստիճանի ջերմութիւնը հաստատուն պահել, շատ սակաւակերութիւն ձեռքընելու չէ:

Նոյն պատճառի համար է որ Սպանիացիք ալ ջրով կը բաւականանան, մինչդեռ Անգղիա զրկուած Պոռտոյի զինին մէջ, զուրցեր են ինծի թէ հարկ է օղի խառնել, որ չըլլայ թէ անարգ համարուի, իբր նուազ կիզելի նիւթ բովանդակող: Նոյն պատճառի համար է նաև որ Ռուսք աներկիւղաբար օղին դաւածներով կը խմեն, զոր եթէ Բուլանսի բնիկ մը ընէր՝ անշուշտ կը մեռնէր: Նաև Շուէտի տէրութիւնը մեծ դժուարութիւն կը կրէ իր ժողովուրդը արգելելու որ ցորենը օղիի չփոխանակեն. մինչդեռ Մահմետական Արաբացիք անխտիր ընդունած են Ղուրանին պատուէրը, որով արգելուած է իրենց գինի և ուրիշ ինչ և իցէ ոգելից ըմպելիք խմել: Արաբացիք՝ տաք երկրի մէջ բնակելով՝ դիւրաւ կրնան օղին զանց ընել, այլ ոչ նոյնպէս Շուէտացիք, որոնց հայրենիքը այնպէս ցուրտ կլիմայ ունի:

Այդ ամենը բնական է, և ոչ առանց չարամիտ ըլլալու, մենք ալ նոյն բանը կ'ընենք: Յունուար ամսուն մէջ 12-15 աստիճան զրոյէն վար ցուրտ ունենալու ըլլանք, ես ալ կրակարանիս մէջ շատ աւելի փայտ պիտի դնեմ քան թէ այսօր որ ցրտութիւնը միայն երկու աստիճանի է. ուստի զարմանալին ալ ասոր մէջը չէ:

Զարմանալին ահա այս է:

Անգղիացին Հնդկաստան կ'երթայ. հոն երթալով իր եզան խորովածոյն և ռօմն իսկ հետը կը տանի, և հանդարտաբար, 30 աստիճանի ջերմութեան մը տակ, իր կրակարանը զրեթէ մի և նոյն կերպիւ փայտով կը լեցընէ, ինչպէս կ'ընէր իր հայրենիքը: Կարծես թէ տանը կրակ տալ կ'ուզէ. ոչ երբեք: Սակայն ջերմաչափի քննութիւններդ անոր բերնին մէջ ըրէ, 37 աստիճանէն ոչ աւելի և ոչ պակաս կը գտնես, ճշգիւ բրին-

ձով կերակրուողներուն աստիճանին հաւասար: Կրակարանը շատ աւելի խելաջի է քան իր տէրը: Այնչափ ջրածին և ածուխ կ'այրէ, որչափ ճշդիւ պէտք ունի և մնացորդին համար ամենևին անփոյթ է, ինչպէս թէ կերուած չըլլար:

— Սակայն այդ մնացորդը, անշուշտ ըսես պիտի, եթէ չայրուիր՝ ինչ կ'ըլլայ:

— Կը յիշես, սիրելի դու, խօսքս շատ հեռունները կ'ակնարկէ, կը յիշես դու, այն ատեն որ մաղձին և լերդին վրայ խօսելէն ետեւ, մաղձին մէջի բովանդակածէն այն ժամանակին թողուցեր էի դուրցելու, որ թորոց ու շնչառութեան վրայ պիտի խօսէինք:

Ահա ուրեմն, այդ ժամանակը հասաւ:

Այն արեան մէջը դառնուած ջրածինը և ածուխը զոր թթուածինը այրելու կարող չէ, լերդը կը ժողովէ կ'առնու զմաղձը շինելու կը գործածէ: Ուստի արեան մէջ որչափ աւելի անդործ ջրածին և ածուխ գտնուի, այնչափ աւելի առատաբար մաղձ կը շինէ լերդը: Մէյ մ'որ մարմինը իր ջերմութեան աստիճանը առնու, որչափ ալ կիզելի նիւթ ուզեն ամբարել, անկէ աւելի ջերմութիւն գոյացընել կարելի չէ: Միայն թէ այս կ'ըլլայ որ անով լերդին աւելի դործ կը բացուի, և խեղճը ինչպէս կրնայ պէտք է աշխատութիւնը առաջ տանի: Անոր համար ալ վերջապէս մեր շատակեր Բրիտանացուց ինչ կը հանդիպի: Իրենց մաղձագործ վաճառականը, որ չափազանց աշխատանքի տակ կը ճնշուի, կը սպառուի և վերջապէս կ'ըմբոստանայ, և իրենց լերդի հիւանդութիւն մը պատճառելով՝ կը բռնադատէ որ տուն դառնան:

Ահա քեզի ուրեմն առաջին մեկնութիւն մը այն բարեխառնութեան զարմանալի հաւասարակշռութեանը, զոր բարեբաղդաբար մարդկային անդգուշութիւնը կարող չէ իր ճամբէն չեղելու: Սակայն արիւնը դարձեալ ուրիշ միջոց մըն ալ ունի իր չափէն աւելի բովանդակած ջրածինը և ածուխը իրմէն դուրս մերժելու, և ասոր մէջն է գլխաւորապէս որ յայտնի կ'երևնայ այն զար-

մանալի նախատեսութիւնը՝ որով ամենայն ինչ կարգադրուած է ի մեզ: Գայլերու համար կը զուրցուի թէ երբ իրենց ակռային տակ ինկած կտորը ունեցած ախորժակէն աւելի է, աւելին կը տանին անանկ տեղ մը կը թաղեն, որ քաղցած ժամանակնին կարենան դիւրաւ գտնել: Արիւնն ալ նոյն բնական բերումն ունի: Խօսքիս աղէկ ուշ գիր, վասն զի ըսելիքս շատ հետաքրքրական է:

Ահա ճրագ մը կը վառեմ: Ըսէ ինծի տեսնեմ, ուսկից առաջ կու գայ այն պայծառ բոցը, որ ցորչափ պատրոյգին ծայրը կտոր մը ճարպ կայ, առանց մարելու շարունակ կը վառուի:

Ինչո՞ւ համար կը ծիծաղիս: Մեր խընդրէն դուրս չեմ ելած:

Գիտենք, անանկ չէ, թէ այն մարմինը որ աւելի աղէկ կը բռնկին, ածուխով և ջրածնով լի են: Ճրագուն ուրեմն այդ մարմիններէն մէկն է: Բայց ինչ է տեսնեմ այդ ճրագուն:

Ոչխարի ճարպն է, եթէ գեռ ևս չես դիտեր՝ սորվէ:

Հիմա տեսնեմ, այդ ոչխարի ճարպին մէջ ո՞վ այնչափ ջրածին և ածուխ դրեր է՝ որ անով ճրագներ շինելու կարելի ըլլայ:

Յայտնի բան է, ոչխարին արիւնն է այդ բանն ընողը, որովհետեւ մարմնոյն ամեն բան հոգացողը արիւնն է, և ինչպէս ոչխարին՝ ասանկ ալ մերինին:

Հապա ոչխարին արիւնը ուսկից ունեցեր է այնչափ պաշար:

Յայտնի է թէ ոչխարին կերածներէն, որոնց մէջ այնչափ աւելի կար՝ որչափ թթուածինը չէր կրցած այրել, և ոչ լերդը սպառել: Եւ յիրաւի, ինչպէս մենք, ասանկ ալ ոչխարը թէ թոր և թէ մաղձի գործատուն մը ունի. թթուածինն ալ մի և նոյն արհեստը կ'ընէ ինձմա ինչ որ ի մեզ. ինչ որ շնչառութեամբ իր մարմնոյն մէջ կը կատարուի, մեր մարմնոյն մէջ եղածին ճիշտմանն է, և անոր ճարպին պատմութիւնը յայտնի և պարզ կերպիւ մեր ճարպին պատմութեանը նման է:

Այդ միթէ կը կարծես որ ոչխարին արիւնը միայն զմեզ նպատակ ունենալուն պատճառաւ է որ այնպէս քիչ քիչ իր ճարպը անոր բոլոր մարմնոյն մէջ կը նստեցընէ, և անոր համար միայն այսպիսի կերպով կ'աշխատի՝ որ մեզի ճշրագ հոգալու պատիւն ունենայ: Այդ բանը կարելի չէ զուրցել: Քիչ մ'առաջ գայլուն վրայ խօսք կ'ընէի քեզի, սակայն այնչափ հեռուները պտըտելու հարկ չկայ: Շատ գեղացւոց տնակներուն անկիւնը սակաւագէտ բան չէ հին հողէ աման մը դտնել՝ որուն մէջ օրէ օր դրամական խնայութիւնները կը դիւլուն, որպէս զի մեծ պէտքի ժամանակ իբր յետին օգնութիւն մը կարենան ծառայել: Եթէ յանկարծ չար աւազակին մէկը զտէրը սպաննելով այն դաղտնի գանձը ձեռք ձգէ, քանի մը ժամու չարաչար զեղխութիւններով՝ այն թանկագին գանձը կը վատնէ, որ ապագայ անստոյգ պիտոյից նախատեսութեամբ ծանր ծանր հաւաքուեր էր: Այսպէս կ'ընէ մարդս ալ երբ ոչխարը կը սպաննէ և զճարպը ճրագ շինելու համար կ'առնէ: Խեղճ կենդանւոյն արիւնը գիտէր որ կրնար անանկ գէշ օրեր գալ՝ որ խոտը հատնի, և մարմնոյն մէջ զրկած կիզելի նիւթը անբաւական ըլլայ անոր 39 կամ 40 աստիճանի ջերմութիւնը պահպանելու, (որովհետև այս է ոչխարին ջերմութեան աստիճանը, որ մեզմէ քիչ մը աւելի տաք է): Ուստի այս բանիս համար կամաց կամաց կիզելի նիւթին պաշարը տեսեր է, և զայն ձեռքի տակ տեղ մը զետեղեր էր, որ կարօտութեան ժամանակ գործարանաց ներսը մաղմաղ կըրակով պիտոր պրէր: Մարդը՝ որ ողջոյն բնութեան աւազակն է, վրայ կը հասնի, և զայն առնելով պայծառ բոց մը կը վառէ, և մէկ գիշերուան մէջ շռայլութեամբ ուն խեղճին բազմաթմանակեայ խնայութիւնները կ'այրէ: Սակայն միշտ այրիլ և այրիլ էր ճրագուն վախճանը. որով միայն եղանակին մէջն է տարբերութիւնը: Գեղացիին զրամներուն կը նմանի, որ վերջապէս գործածուելու համար հոն դեռ հաւաքուած դիզուած էին, միայն թէ անոնց գործածութիւնը այլապէս պիտոր ըլլար: Դիտէ որ 1815ին մեր երկիրը եկող Ռուսաց զինուորները, շատ աղէկ դիտէին զճրագը իր առջի նպատակին դարձնել. ըստ որում Հիւսիսակողման որդիք ինչ և իցէ փայտով կրակ վառել սովորած ըլլալով, որչափ ճրագի կտորուանք կրնային գողնալ՝ կ'ուտէին, լաւագոյն համարելով ոչխարին նման՝ զճրագուն ներսի դին այրել:

Ուրեմն ճարպն, արեան խնայութեան արկղն է: Անոր մէջն է որ արիւնը իր խնայութեանց արդիւնքը կը զետեղէ, զորոնք և պէտքի ժամանակ հեշտեալ կը դտնէ. այս բանիս վկայ ըլլայ այն գէր խոզը՝ որուն վրայ Լիպիկ գերմանացի հռչակաւոր բնալոյծը կը խօսի, որ կործանած շէնքի մը աւերակաց տակ թաղուելով, 160 օր ետքը ողջ գտնուեցաւ: Կենդանւոյն ճարպը սպառելով անյայտ եղեր էր, և իր առջի ծանրութենէն՝ 60 քիլոյ նուազ կը կըշռէր: Հռչակաւոր ուսմագիտին խօսքին վրայ տարակուսիլ չենք ուզեր. սակայն թէ և ուզենանք իր տուած հաշուէն քանի մ'օր նուազեցընել, դարձեալ զարմանալի է թէ ինչպէս արիւնը՝ կերակրոյն պակսելէն ետքն ալ ճարպին մէջ այնչափ սնունդ կը դտնէ. վասն զի տարակոյս չկայ որ խոզը այս 160 օրուան մէջ ծայրէ՛ի ծայր օդ շնչած էր, և այդ գործը որչափ ալ սովորականէն աւելի դանդաղ կատարուած ըլլար, ի վերայ այսր ամենայնի ջրածնի և ածխի կրակը և ոչ վայրկեան մը մարեր էր. ատոր վրայ ամենևին վստահ եմ և թէ ինչո՞ւ քիչ ատենէ պիտոր իմանաս: Խոզը շատ աղէկ ըրեր էր որ առատութեան օրերը պաշար դիզեր էր. ո՞վ ծուղակն ինկաւ: Խոզին տէրն անշուշտ, որ կանխաւ կ'ուրախանար թէ անկէ իր կիզելեաց համբարանոցներուն մէջ ճարպի պաշար պիտոր դիզէ: Այս անգամուն խոզը իր յատուկ ճարպը ինքնին կերաւ:

Հիմա կը հասկընաս, կը յուսամ, թէ

ինչպիսի ճարտար տրամադրութեամբ է որ այդ զարմանալի կրակարանը, զոր կենդանի կ'անուանեն, ոչ երբեք չափէն աւելի կիզելի նիւթ կ'այրէ, ինչ քանա-կով ալ զնոյնը ընդունի, և դարձեալ թէ ինչպէս կ'ըլլայ որ միշտ իր մէջը նոյն բաւական չափով մը կը բովանդակէ։ Հիմա ինծի կը մնայ սորվեցընել քեզի թէ ինչպէս մեզի հարկաւոր բան է որ նոյն կիզելի նիւթէն միշտ բաւականապէս մէջերնիս ունենանք, և թէ ինչպէս այս բանն ոչ ցուրտի ու տաքի կը նայի, ինչպէս մեր սենեկաց կրակարանները, այլ կենաց և մահու։ Քիչ մը հոգի առ։ Շնչառութեան վերջը հասած ենք, զոր բնութիւնը այսօր տուաւ քեզի։

Կը շարունակուի։

ՊՐԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

(Տես երես 87։)

Նարա-Մունի իտալիոյ գեղեցիկ եր-կիրը հասնելով, զարմացաւ ոչ միայն մուրացող արեղայից բազմութիւնը տեսնելով, այլ նաեւ ողորմութիւն տուող ներուն խեղճութիւնը, որոնք աւելորդը չունենալով իրենց հարկաւորէն կու տա-յին անոնց. ուստի չժուժաց ինքնիրեն ըսելու. «Այս մարդիկն իմ ծեր Պապը գեղջուկիս առածին չեն հետևիր. Աստուած իրենց ալ գեղեցիկ արեւ և ար-դաւանդ երկիրներ տուած է, սակայն ինչ որ Պօմպէրի բնակչաց կ'ըսուի՝ նոյնը իրենց ալ կրնայ զուրցուիլ, թէ Աւեւեկէն հասուցն պտուղն ալ քերևիդ ձեզ իյնալ չկրնար։ Լաժժարոնի ըս-ւած դատարկապորտ ժողովուրդը՝ այն-պէս զզուելի և անանկ անբարոյական երեցաւ իրեն, որ իր գրքին մէջ Եւրո-պիոյ Բարխաններն անուանեց զանոնք։ Այս ժողովրդեանս մեծագոյն հարուա-ծը ծուլութիւնն ըլլալ երեցաւ Պրահ-մային, իսկ ժուժկալութիւնը՝ ամենին անոր անլուր առաքինութիւն. զանոնք տեսնալով իր հայրենեաց հանճարեղ առածներէն մէկն յիշեց։

Մոյլը յօժարակամ պատրաստ է կաղնն ու-տելու, բայց կուտը կօտրելու նեղութենէն կը քաշուի։

Հետզհետէ որ իտալիոյ մէջ յառաջ կ'երթար, կը հիանար նախնի մեծու-թեան մը մնացորդներն տեսնելով՝ ո-րոնք դեռ ևս կենդանի վկայ էին այն վաղեմի օրինաց՝ որ այս ժողովուրդը երկրիս առաջին ազգն ըրին։ Կարծես թէ ամեն յիշատակարանաց վրայ հռով-մայեցի իմաստասիրի մը այս առածը զրոշմուած կը տեսնէր։

Հասարակաց բարին պէտք է ըլլայ առաջին և զվեաւոր օրէնք։

Մի միայն այս խօսքէ՝ ըմբռնեց թէ որչափ մեծ պէտք է եղած ըլլային այն հին ժողովուրդներն։

Եթէ իտալացիք ինկած երեցան Պր-րահմանին այն զօրութենէն որ օրինօք ու զինուք ուրիշ ազգաց վրայ կ'իշխէ, զգաց որ դեռ ևս կենդանի էր 'ի նոսա այն իմացականութեան կարողութիւնը՝ որ ճարտար արուեստիք կը յաղթա-հարէ. երբեք ուրիշ տեղ այնպիսի յա-փըշտակիչ ներդաշնակութեամբ երա-ժըշտութիւն մը լսած չէր. երբեք ուրիշ տեղեր անանկ նկարներ տեսած չէր, որ լաւագոյն վկայ ըլլան մեծ մտածու-թիւն մը յղացող հանճարոյն, և զնոյնս գործադրող տաղանդին. սակայն ստէպ մարմարեայ պալատան մը քովն՝ որուն ճարտարապետութեանը վրայ զարմաց-մամբ կրնայէր, վերջին աստիճանի խեղ-ճութիւն մը կը նշմարէր. պալատներ՝ որոնց շատը այսօրուան օրս ամայի են, և որոնց հին տէրերը կարծես թէ ա-նոնց տնպահներն են. ասկէց Նարա-Մունի այդ ազգին ընկերական վիճա-կին հաւատարիմ գաղափարն ըմբռ-նեց։

Խեղացի և վառվռուն նայուածքով իտալացի մը, առ որ Պէնկալի Անգղիացի մը յանձներ էր զինքը, ըսաւ իրեն. Ո-րովհետեւ դու ազգաց մէջէն այն առած-ներն ժողովելու ելեր ես՝ որ իրենց ա-ռաջնորդ եղեր են, կրնաս նմանապէս այն վճռական նմանութեանց մէջէն այն